և մխիթարէր 'ի նմանէ իբրև 'ի հրեշտակէ Աստուծոյ »։

Ապա յետ վախճանի սորայն, որ եղև յԻտալիա 'ի վա-նըս Բենետիկտեան կրօնաւորաց, ուր պահեն առ ամփո-փեալ յարկեղս խարազն նորա, Սաղմոս և Կտակարան հայե-րէն, բերեալ ընդ իւր 'ի հայրենի աշխարհէն։ Եւ թուղթ մի 'ի Հայ լեզու գրեալ առ նա յԱրսենէ Հայ եպիսկոպոսէ Երուսաղէմի, զոր ոմանք դնեն լինել Պատրիարգ քաղա-քին։ Սա ինքն Արսէն գրեալ էր և զայլ թուղթ մի յանձ-նարարական ընդհանրապէս առ Արևելեայս յետ ելանե-լոյ սորայն 'ի Պաղեստինոյ։ Պատմ. Հայ. Հատ. Բ. 861–865։

Զփառաւոր տաճարն, զոր եա կանգնել Մեծն Կոստան-դիանոս 'ի Դիոսպոլիս, այն է Լիւդեա, յանուն Ս. Գէոր-գայ զօրավարին, 'ի հայրենիս մօր նորին, զկնի փոխադը-րութեան նշխարաց սորայն 'ի Նիկոմիդեայ, աւերեաց զայն Սուլթանն Եգիպտոսի, զի մի Լատինք տեսեալ զնիւթս նորա՝ շինեսցեն մեքենայս պատերազմի ընդդէմ Երու-սաղէմի (1010)։

Ապա 'ի վերանալ թուականին ՆԻԵ (1034) եղև երկ-րաշարժ յԵգիպտոս, յԱսորիս և 'ի Պաղեստին, յորմէ ան-կան և կործանեցան շինուածք մեծամեծք, և մեռան բազ-մաթիւ մարդիկ 'ի փլատակս նոցին։ Աւերեցաւ եւ երիր-մասն Ռեմլէ քաղաքի, վնասեցաւ եւ մզկիթն 'ի նմա. եւ բնակչաց խոյս տուեալ 'ի քաղաքէն, դադարեցին արտաքոյ նորին աւուրս 8 և անդրէն դարձան 'ի տեղիս իւրեանց։ Աւերեցան ոմանք 'ի շինուածոյն Երուսաղէմի, վնասեցան մզկիթքն Օմարայ և Հայր Աբրահամու 'ի Քեբրոն։

Աթսիզ ոմն Աւք 'ի Խարեզմայ, զոր տաճկային պատ-մագիրք կոչեն Ախսէ. տիրեաց Երուսաղէմի և Ռեմլէ քա-ղաքի յաւուրս Մուսթանսր Պիլլահ Խալիֆային Եգիպ-տոսի, եւ յետ երկու ամաց իսպառ բարձաւ իշխանու-թիւնն Ֆաթիմեան 'ի Պաղեստինէ, և անկաւ ընդ իշխա-նութեամբ Աբասեան Խալիֆայի, որք նստէին 'ի Բաղ-դատ ՆԿԵ (1072)։ Եւ յետ այնորիկ տիրեաց նաև Դա-մասկոսի, ուր և սպանաւ զկնի 6 ամաց։ Եւ եկաց իշխան երկրին Թըթուշ՝ որդի Ալփասլանայ 'ի Սելճուկ տոհմէ և յԵրուսաղէմ, որ համարեալ էր յայնժամ մին գաւառաց Դամասկոսի, եկաց իշխան Արթուք Պըն Էքսիք 'ի Թիւրք-